ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա. Մ.

ԽՍՀՄ փլուզումից հետո հատկապես վերջին տարիներին բավական հետազոտություններ են նվիրված հետխորհրդային տարածքում տեղի ունեցող միգրացիոն գործընթացներին:

Միաժամանակ հարկ է նշել, որ աշխատանքների զգալի մասում խեղաթյուրվում են վիճակագրական տվյալները՝ հիմնականում պայմանավորված տարբեր երկրների միջև տեղի ունեցող միգրացիոն հոսքերին տրվող քաղաքական բնութագրումներով: Հատկապես սա վերաբերում է Կովկասին: Ընդհանուր առմամբ, միգրացիոն գործընթացների մասին պատկերացումները Կովկասում պայմանավորված են հիմնականում հետևյալ մի քանի պատճառներով.

1. Ամենից առաջ՝ փախստականների և միգրանտների թվի հաշվառման տարբեր մեթոդաբանություններով: Այս առումով միանգամից նշենք, որ հատկապես վերջին տարիներին Համաշխարհային բանկի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից փորձ է արվում և հաջողությամբ ներդրվում է միգրացիոն հոսքերի շարժի վերահսկողության և ճշգրտման այնպիսի ունիֆիկացված մեթոդաբանություն, որը թույլ է տալիս առավել իրատեսական գնահատել միգրացիոն հոսքերը:

2. Բնակչության տեղաշարժը երկրից դուրս զգալիորեն պայմանավորված է նաև քաղաքական գործոններով:

3. Դրանք այն սահմաններն են, որոնց շրջանակներում ընդունված է քննարկել ինչպես փախստականների, տեղահանվածների, այնպես էլ միջպետական աշխատանքային միգրացիան: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ինչպես պետական, այնպես էլ ժամանակավոր սահմանների մասին միգրացիոն հոսքերի վերլուծության համատեքստում:

Սովորաբար փախստականների և հարկադիր տեղահանվածների թիվը որոշվում է (ԱՊՀ երկրներում) տվյալ երկրների միգրացիոն ծառայությունների տվյալներով: Հաշվառման այդպիսի անկատարությունը ակնհայտ է: Բավական է նշել, որ տվյալ դեպքում հաշվի են առնվում միայն նրանք, ովքեր դիմել են ընդունող երկրի գրանցող ծառայություններին: Օրինակ, Կրասնոդարի երկրամասում մեծ թիվ են կազմում Ադրբեջանից փախստական էթնիկ հայերը, ընդ որում, նրանց զգալի մասը, որոշ ժամանակ բնակվելով Հայաստանում, տեղափոխվեց Ռուսաստան, հետևաբար չէր կարող ստանալ փախստականի կարգավիճակ: Նմանատիպ իրավիճակ է ստեղծվել այսօր Վրաստանից Հյուսիսային Օսեթիա տեղահանված էթնիկ օսերի համար: Կամ առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Չեչնիայից ռուս և ռուսալեզու բնակչության խոշոր միգրացիոն տեղաշարժերը

Ռուսաստան[1]: Առանձնահատկությունը նրանում է, որ Չեչնիայից Ռուսաստան միգրացիոն հոսքերի շարժը, ըստ էության, պայմանավորված չէ տնտեսական գործոններով[2]:

Ինչ վերաբերում է Հարավային Կովկասի երկրներում միգրացիոն հոսքերի հաշվառմանը, այն բարդանում է այնքանով, որ դրանց զգալի մասը գտնվում է իր երկրի սահմաններից դուրս: Վերը նշվածը վկայում է, որ միգրացիոն գործընթացները ԱՊՀ շրջանակներում կրում են բացարձակապես անվերահսկելի բնույթ: Մասնավորապես, մինչև վերջին տարիները բաց սահմանների առկայությունը չէր արտացոլում բնակչության իրական շարժը: Եթե հաշվի առնենք, որ միգրացիոն հոսքերը Կովկասից Ռուսաստան կրում էին խիստ ընդգծված սեզոնային բնույթ, ապա ծագում է լրացուցիչ խնդիր, օրինակ, Ադրբեջանից բռնագաղթված հայը կարող է գրանցվել Հայաստանում, ապրել ու աշխատել Ռուսաստանում, ընդ որում, ընտանիքը կարող է բնակվել Բելառուսում: Հարկ է նշել, որ Հարավային Կովկասի ազգերի և ազգությունների համար դա տիպիկ երևույթ է:

Քաղաքական գործոնները ծնում են այն երկրորդ խումբ հիմնախնդիրները, որի հետևանքով հարկադիր միգրացիան դառնում է խաղաքարտ քաղաքականությունում: Սա վերաբերում է ինչպես Ադրբեջանից Ռուսաստան միգրացիոն հոսքերին, վրացի փախստականներին՝ Աբխազիայից, այնպես էլ Ադրբեջանից բռնագաղթված հայերին: Այդ երկրներից արտաքին միգրացիայի իրական չափերի որոշմանը մեծապես խանգարեց այն հանգամանքը, որ 1989 թ. մարդահամարը սկսվեց այն ժամանակ, երբ արդեն առկա էին Հարավային Կովկասում տիրող կոնֆլիկտային իրավիճակները, իսկ 1979 թ. մարդահամարի տվյալները բավական հին էին:

Երրորդ առավել կարևոր գործոնը միգրացիոն հոսքերը պայմանավորող սահմանների հիմնախնդիրն է: Հարկ է նշել, որ միգրացիոն հոսքերի ուղղվածությանը միայն վեկտորիալ մոտեցում ցուցաբերելիս հնարավոր չէ իրատեսական պատկերացում կազմել տվյալ երևույթի մասին, այսինքն՝ հարկ է ընդլայնել ոչ միայն աշխարհագրական, այլև ժամանակային շրջանակները: Օրինակ, միգրացիոն հոսքերը ժամանակակից Կովկասում սկսվել են դեռևս մինչև ԽՍՀՄ փլուզումը: Չնայած 1990-ականներին միգրացիայի մասշտաբները կտրուկ աճեցին, սակայն, ըստ էության, միգրացիոն հոսքերի ուղղվածությունը 1960-ական թվականներից մնացել է նույնը:

Մասնավորապես, եթե Հայաստանից միգրացիոն հոսքերը ԱՊՀ երկրներ պայմանավորված էին այնտեղ բնակվող հարազատների առկայությամբ, ապա այսօր հիմնական պատճառներից են նաև հայազգի միգրանտների՝ Հարավային Կովկասի այլ ժողովուրդների համեմատ նրանց բարձր այլընտրանքային հնարավորությունները: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Հայաստանից արտագնա աշխատանքի մեկնող որակյալ աշխատուժին: Հայաստանից ռուսալեզու բնակչության

---

[1] Տե՛ս **Искандарян А.,** *Миграционные процессы на постсоветском Кавказе. Миграции на Кавказе (материалы конференции), Е., 2003, с. 6-10.*

[2] Տե՛ս **Еганян Р. С., Давтян Л. М.,** *Внешнемиграционная ситуация Армении. Материалы научного семинара "Демография Армении на рубеже тысячелетий", Е., 2000.*

արտահոսքը սկսվեց ավելի ուշ: 1980-ական թթ. ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների համար արդեն ձևավորվեց ոչ բնիկ բնակչության բացասական սալդո: Այս առումով հարկ է նշել այն հանգամանքը, որ ընդհանուր առմամբ ոչ բնիկ և ռուսալեզու բնակչության արտագաղթը պայմանավորված էր նաև մշակութային, հատկապես լեզվի բնագավառում այդ հանրապետություններում քաղաքականությունների փոփոխմամբ:

Այսօր, երբ մասնագետների կողմից վերլուծվում է այս կամ այն երկրի ժողովրդագրական իրավիճակը, վերը նշված հանգամանքը դրսևորվում է ավելի ցայտուն: Բավական է հիշատակել մերձբալթյան հանրապետություններից ռուսալեզու բնակչության դուրսմղման գործընթացները պայմանավորող գործոնները, կամ էլ Հարավային Կովկասի ժողովուրդների նկատմամբ տարվող խտրական քաղաքականությունը ՌԴ-ում:

Այսպիսով, դեռևս խորհրդային շրջանում (և ոչ միայն) արդեն 1970-1980-ական թթ. սկսվեց ապագա ազգային պետությունների մշակութային, լեզվի, ազգային մտածողության «բյուրեղացման գործընթացը»: Ցավոք, արդեն 90-ականներին այդպիսի մոնոէթնիզացումը ընթանում էր արյունալի կոնֆլիկտներով, որը շարունակվում է առ այսօր և եզակի է իր դրսևորումներով Կովկասի պատմությունում: Դարեր շարունակ Կովկասում բնակվող ժողովուրդների և ազգությունների տնտեսական, մշակութային, սոցիալ-մշակութային, սոցիալ-հոգեբանական շփումները կրում էին սահմանային բնույթ: Այս առումով պատահական չէ մշակութալեզվական գործոնի նկատմամբ այդքան մեծ ուշադրությունը, քանի որ Կովկասում տեղի ունեցող միգրացիոն գործընթացների վրա այս գործոնը ձեռք է բերել էական նշանակություն: Միգրացիայի մեկ այլ կարևոր ասպեկտ, որն այսօր փոխում է Կովկասի դեմքը, այն հանգամանքն է, որ Կովկասյան երկրներից, ընդհանրապես տարածաշրջանից դուրս է գալիս Կովկասյան պետությունների ազգաբնակչության սերուցքը կազմող երիտասարդությունը՝ պայմանավորված ուղղակի տնտեսական շարժառիթներով:

Գաղտնիք չէ, որ Հարավային Կովկասի պետություններին միշտ էլ բնորոշ է եղել «ավելցուկ աշխատուժը», և պայմանավորված անկախության առաջին տարիներին տեղի ունեցող գործընթացներով՝ սկսվեց արտահոսքը տարածաշրջանից դուրս: Եթե սկզբնական շրջանում դրանք կրում էին հարաբերականորեն ազատ բնույթ, ապա այսօր Կովկասից դեպի այլ երկրներ (հիմնականում Ռուսաստան) դրանք ենթարկվում են խիստ վերահսկման ընդունող երկրների կողմից: Մասնավորապես, տնտեսական շարժառիթը Հայաստանից, միգրացիոն հոսքերի շարժի «գինը» այլ երկրներ տարբեր մասնագետների հաշվարկներով գնահատվում է 1 մլրդ 200 մլն-ից մինչև 1 մլրդ 400 մլն դոլար, որը ստանում է Հայաստանի բնակչությունը կամ բանկային հաշվարկագրերով, կամ էլ մասնավոր տրանսֆերտների տեսքով: Որպես ընդհանուր եզրակացություն, չնայած ստույգ տվյալների բացակայությանը, կարելի է ասել, որ միգրացիոն վեկտորները Կովկասում բավական հստակ են և ավարտուն: Միաժամանակ Կովկասում տեղի ունեցող գործընթացները հիշեցնում են XX դ. առաջին կեսին Կենտրոնական և Հարավային Եվրոպայի

երկրներում տեղի ունեցող միգրացիոն գործընթացները: Դրանք ամենից առաջ պայմանավորված էին միգրացիայի էթնիկական բնույթով: Ընդ որում, կարելի է ասել, որ աշխատանքային միգրացիան տարածաշրջանից դուրս նույնպես կազմում էր այդ գործընթացի մի մասը, օրինակ, 70-ական թթ. բավական է հիշատակել Հարավսլավիայից, Թուրքիայից միգրացիոն հոսքերը դեպի Գերմանիա, Ալժիրից Ֆրանսիա, որոնք, ըստ էության, ապահովում էին էժան աշխատուժը այդ երկրներում: Նույն պատկերը այսօր է: Ամեն դեպքում, պետք է նշել, որ այդ գործընթացները կրում են գլոբալ և օբյեկտիվ բնույթ, ընդ որում, բավական բարդ են և բազմաշերտ: Դրան հակազդել ուղղակի տեղային մակարդակով այսօրվա դրությամբ գրեթե անհնար է, քանի որ դա ամենից առաջ պայմանավորված է այս կամ այն երկրի տնտեսական և սոցիալական հնարավորություններով:

Փորձենք տեղայնացնել հիմնախնդիրը: Գաղտնիք չէ, որ հանրապետությունում աշխատատեղերի բացակայության (կամ էլ շատ ցածր վարձատրության) պատճառով աճում է ելքային միգրացիան Հայաստանից: Այս հարցի օրենսդրական չկարգավորվածության պատճառով մեկնողների մեծ մասը, շրջանցելով մուտքի և ելքի երկրների օրենսդրություններով սահմանված կարգը, որպես կանոն, հայտնվում է անօրինական միգրանտի կարգավիճակում, որն իր հերթին առաջ է բերում բազմաթիվ օրենսդրական հիմնախնդիրներ: Խոսքը մասնավորապես արտագնա աշխատանքների կազմակերպման անվան տակ առանձին անհատների և իրավաբանական անձանց մասին է, ովքեր զբաղվում են դրամաշորթությամբ՝ աշխատանքի տեղավորման երաշխիքը արտասահմանում թողնելով տեղի իշխանությունների քմահաճույքին: Կարծում ենք՝ հիմնախնդիրը հետևյալումն է: Առ այսօր Հայաստանում չկա օրենք միջազգային միգրացիայի մասին: Միգրացիոն տարաբնույթ հարցերը կարգավորվում են մի շարք օրենքներով և կառավարական որոշումներով: Հարկ է նշել, որ ՀՀ՝ այլ երկրների (այդ թվում նաև՝ ԱՊՀ երկրների) հետ ստորագրած համաձայնագրերում խոսք չկա միջպետական միգրացիոն հոսքերի, ավելի ճիշտ, դրա հիմնական բաղկացուցչի՝ արտագնա աշխատանքի կարգավորման միասնական օրենսդրական դաշտի ստեղծման մասին: ՀՀ օրենսդրությունն այդ հարցում առայժմ անդրադառնում է լոկ հիմնական սկզբունքներին, թողնելով, որ բոլոր ընթացակարգերն ու վարչական գործընթացները հետագայում սահմանվեն և լուծվեն օժանդակ օրենսդրական ակտերով: Եվրամիությունն այս առումով ունի հստակ ընդգծված ռազմավարություն: Խոսքը անցումային շրջանում գտնվող երկրներում զուտ հիմնարար, միասնական կանոններ ընդունելու և մանրամասները լրացուցիչ օրենսդրական փաստաթղթերում արտահայտելու պրակտիկայի մասին է: Այս միտումը հաճախ հատկանշական է կայուն, արդյունավետ իրավական և վարչական կառույցների ձևավորման փուլերին: Եթե նման մոտեցումները արդյունավետ են կարճ ժամանակահատվածում, ապա կառավարությունները պետք է ձգտեն այդ փորձը տարածել երկար ժամանակահատվածի համար, այսինքն՝ ստեղծել հստակ օրենսդրություն՝ սահմանելով ժողովրդական վերահսկողություն, սահմանել կառավարման և լիազորության կոնկրետ սահման-

ները՝ երաշխավորելով իր քաղաքացիների ու օտարերկրացիների իրավունքների պաշտպանությունը:

Հայտնի է, որ տնտեսական միգրացիան ՀՀ-ից սկիզբ է առել դեռևս 80-ականներին, որն ըստ էության ընդգրկում էր տնտեսապես ակտիվ բնակչությանը, իսկ ըստ սեռատարիքային կազմի՝ 25-50 տարեկաններին, հատկապես տղամարդկանց: Ելքային միգրացիոն հոսքերը որակապես փոփոխվեցին հատկապես 90-ականներին, երբ սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանքով հանրապետությունից սկսեցին հեռանալ ընտանիքներով: Այս հանգամանքը խիստ բացասաբար ազդեց հանրապետության բնակչության ժողովրդագրական կազմի ու կառուցվածքի, սոցիալական ու տնտեսական իրավիճակի վրա:

Չնայած վերը նշված հանգամանքին՝ այդ ժամանակահատվածում արտագնա աշխատանքները որոշակիորեն նպաստեցին զործազրկության նվազմանը, արտարժույթի ներհոսքի ապահովմանը, որոշակի առումով՝ ներդրումների խթանմանը: Նշենք, որ միգրացիոն ակտիվությունը, այդ ժամանակահատվածում խիստ բնորոշ էր հատկապես Երևանին, քանի որ բարձր մասնագիտական հնարավորությունների հաշվին միգրացիոն հոսքերում ընդգրկված արտագնա աշխատանքի մեկնողների այլընտրանքային հնարավորությունները բավական բարձր էին[3]: Մասնավորապես քաղաքներից դեպի դուրս աշխատանքային էմիգրացիայի տեմպը գրեթե երկու անգամ բարձր էր, քան գյուղերից (5,4% և 2,8% համապատասխանաբար)[4]: Քանի որ մարզերում արտաքին միգրացիոն հոսքերի ձևավորումը հնարավոր չէ ընդգրկել հոդվածի շրջանակներում, նշենք միայն, որ այն ինքնին ուշագրավ հիմնախնդիր է և ունի մի շարք յուրահատկություններ՝ մարզային միգրացիոն ակտիվության համատեքստում:

Աշխատանքային միգրանտները առավել հաճախ ընտրել և ընտրում են Ռուսաստանը: Ըստ տնային տնտեսությունների սոցիոլոգիական հարցումների՝ 2002-2005 թթ. ՀՀ շուրջ 140.000 քաղաքացի է մեկնել աշխատելու Ռուսաստանի Դաշնությունում[5]: Ինչպես նշում են հետազոտողները, դա նաև ցույց է տալիս պրակտիկան, այդ հանգամանքն ունի իր օբյեկտիվ պատճառները, մասնավորապես լեզվական խոչընդոտի բացակայությունը, համեմատաբար էժան ճանապարհածախսը, անհամեմատ բարձր աշխատավարձը, ընթացիկ ցածր ծախսերը և, իհարկե, հայկական ամենամեծ համայնքի առկայությունը: Սակայն վերջին տարիներին ՌԴ-ում սկսված ազգատյաց շարժումը, հատկապես խոշոր քաղաքներում, որոշակիորեն նվազեցրել է միգրացիոն շարժի ինտենսիվությունը ՌԴ-ում:

Տարօրինակ է, որ առ այսօր ՀՀ-ի և ՌԴ-ի՝ ռազմավարական դաշնակիցների միջև կարգավորված չեն արտագնա աշխատանքների կարգավորման պետական

---

[3] Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, ՄԱԶԾ, Ե., 2003, էջ 69 (տե՛ս **Եգանյան Ռ., Շահնազարյան Ն.,** Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից, գրականության ակնարկ, Ե., 2004):

[4] **Մինասյան Ա., Հանչիլովա Բ.,** Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից 2002-2005 թթ., Ե., 2005, էջ 30:

[5] Նույն տեղում, էջ 30:

քաղաքականության սկզբունքները: Հայտնի է, որ որևէ պետության աշխատանքի իրավունքի իրացման և աշխատաշուկայում առաջարկի ու պահանջարկի հարաբերակցության կարգավորման գլխավոր ուղին նոր աշխատատեղերի ստեղծումն է, որը հնարավորինս կօժանդակի տվյալ երկրի տնտեսության զարգացմանը: Միաժամանակ, հաշվի առնելով բավարար քանակությամբ աշխատատեղերի ստեղծման համար պահանջվող խոշոր ներդրումների իրականացման տևական բնույթը, ինչպես նաև կենսապահովման գործում արտագնա աշխատանքների նշանակությունը, պետությունը պարտավոր է կարճ և երկարաժամկետ հեռանկարում նպաստավոր պայմաններ ստեղծել արտագնա աշխատանքում իր քաղաքացիների ներգրավման համար՝ իրավական երաշխիքների ստեղծման ճանապարհով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտագնա աշխատանքում հանրապետությունից աշխատուժի հոսքերը հիմնականում պայմանավորված են դրսի շուկայի պահանջարկով, մանավանդ մարդկային կապիտալի հարաբերականորեն բարձր այլընտրանքային հնարավորություններով՝ առանձնապես կարևորվում է արտագնա աշխատանքի մեկնողների շահերի և իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական երաշխիքների ապահովումը: Մասնավորապես, ըստ «Արտագնա աշխատանքների կազմակերպման մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի՝ արժևորվում է արտագնա աշխատանքների կազմակերպման լիցենզավորման անհրաժեշտությունը իրավաբանական անձանց կողմից: Ահավասիկ, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի (Լիցենզավորման սկզբունքները) I-ին կետում սահմանված լիցենզավորման սկզբունքներից է «անձանց իրավունքների, օրինական շահերի... ապահովումը»: Այս հանգամանքն առանձնապես կարևորվում է նրանով, որ այսօր զանգվածային բնույթ է կրում ՀՀ քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի ոտնահարումը: Հարկ ենք համարում նշել, որ գործունեության այս ձևը լիցենզավորվում է ՌԴ-ում, Ֆրանսիայում, Ֆիլիպիններում և մի շարք այլ երկրներում, որտեղ համապատասխան իրավական ձևակերպումների դեպքում այն երաշխիքի դեր է կատարում որևէ օտարերկրյա պետության որոշակի գործատուի հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս:

Ի թիվս այս ամենի՝ պետությունը պետք է վերահսկի արտոնագրումը: Բանն այն է, որ այսօր պետական մի քանի մարմին են զբաղվում միջազգային միգրացիայի տարբեր խնդիրներով: Կան որոշակի ինստիտուցիոնալ տարաձայնություններ: Աշխատանքի և սոցիալական հարցերով զբաղվող հիմնական կառույցը աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունն է: Միաժամանակ Միգրացիայի և փախստականների վարչությունը, որ հաշվետու է տարածքային կառավարման և ենթակառուցվածքները համակարգող նախարարությանը, նույնպես ունի որոշակի իրավասություններ միջազգային միգրացիայի առաջին ոլորտներում: Դրանց իրավասությունների տարանջատումը առ այսօր հստակ չէ: Կարծում ենք, որ անհատների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի հիմնադրույթները պետք է արտացոլվեն ազգային օրենսդրության մեջ՝ որպես մարդու իրավունքները հարգելու հիմնական գրավական:

МЕЖДУНАРОДНЫЕ МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ НА ПОСТСОВЕТСКОМ КАВКАЗЕ

КАРАПЕТЯН А. М.

Резюме

В большинстве работ, посвященных проблемам миграции в постсоветском пространстве, приводятся фальсифицированные статистические данные, что обусловлено политической характеристикой миграционных потоков. Помимо того, миграционные процессы в рамках СНГ не подвергаются контролю. Недостоверность данных в этой области обусловлена направленностью миграционных потоков, противоречивостью их географических и временных границ.

Следует отметить, что немалую роль в процессах, имеющих место на Кавказе, играет культурно–лингвистический фактор. По сей день не упорядочены миграционные принципы стратегических союзников – РФ и РА.